

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

PAGE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

էջ

ԽՄԲ. - Մխիթար խորհուրդը՝ թե՛ իսկական
մեծությունը 1

ARTICLE DE FOND

Réd. - Mékhitar le mystère, ou la vraie
grandeur? 1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

PHILOLOGIE

Տէր Ներսէսեան Հ. Ն. - «Գրախոսակիր»
Առաքել Սիւնեցիի (Քննութիւն եւ բնա-
ղիւր) 3
Քրիստոսեան ՅԱՐՈՒԹԻՒՆ. - Նորագիտ օրի-
նակ մը «Անտիոք Անտիոքայ» Օրինակագրին 15

Der Nersessian P. N. - Le «Livre du Pa-
radis» d'Arakel de Sunik (Etude et
texte) 3
Kurdian Horoutioun. - Un nouveaux exem-
plaire des «Assises d'Antioche». 15

ԾԻՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

LITURGIE

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. - Պատմութիւն Հա-
յոց Աղօթամատոյցին 22

Hatsouni P. Vardan. - Histoire du Bréviai-
re arménien 22

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ARCHITECTURE

Ճեղձիւրձեան Ս. - Սանդուղը Հայկական
ճարտարապետութեան մէջ 28

Djevahir S. - L'escalier dans l'architectu-
re arménienne 28

ԳՐԱԿԱՆ

LITTERATURE

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Ծովը 34
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Առաջին չորսը 35
— Վերադարձ 36
— Սպասում 36
— Գերեզմանի ճամբան 37
— Կարօտ գիշերուն 37
ԱԹՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ. - Մահուան մօտ 38
ԹԵՐՃԵԱՆԻԱՆ ՅՈՎՍԷՓ. - Մանկութիւն 40
— Գարնան վերջին օրերուն 40

Serab in Aramaïs. - La mer 34
Hovhannessian P. Vahan. - Le premier ra-
yon 35
— Retour 36
— Attente 36
— Le chemin du cimetière 37
— Nostalgie de la nuit 37
Athmadjian Marie. - Près de la mort 38
Therdjianian Ioseph. - Enfance 40
— Aux derniers jours du printemps 40

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

RECENSIONS

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - «Գանիկի Վա-
րուժան» Գերեզմանի ձեռագրեր 42
— «Երգեր» Հրաչ Քաջարեանի 44

Hovhannessian P. Vahan. - «Daniel Va-
noujan» de Térénig Djizmédjian 42
— «Chants» de Hratch Katcharentz 44

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ECHO ARMENIEN

ԽՄԲ. - Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոս՝
Վեհ. Տ. Տ. Զարեհ Փայասլեան 33
*** - Ի նպաստ Հայաղիտութեան Ամերիկա-
յի մէջ 41

Réd. - Le nouveau Catholico de Cilicie,
S. B. Zareh Payaslian 33
*** En faveur de l'Arménologie en Amé-
rique 41

ԼԵԶՈՒԱԿԱՆ

LINGUISTIQUE

Տէր Ներսէսեան Հ. Ներսէս. - Ի սէր «Մե-
ծաստեանին» 47

Der Nersessian P. N. - Pour l'amour du
Medzaskantch 47



1843 ~ 1956
ՃԺԴ. ՏԱՐԻ

ԹԻԻ 1 - 2
ՅՈՒՆՈՒՄ - ՓԵՏՐՈՒՄ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXIV^e année, 1956, N. 1 - 2, Janvier - Février

ՄԽԻԹԱՐ-ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԹԵ՛ ԻՍԿԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

«Շողակաթ» իր 8-12 թիւով հրատարակած է յօդուած մը, ստորագրուած Ամենապատիւ Սրբազան Պատրիարքէն: Մխիթար-խորհուրդը կը կրէ տիտղոսը այդ յօդուածին: Բայց Մխիթար երբեք խորհուրդ մը չէ եւ չէ կարելի նկատել զայն այդ որակումով: Մենք պիտի կոչէինք զայն պարզապէս Իսկական Մեծութիւնը: Մեծութիւնը մեծ մարդերուն իրենց գաղափարին պարզութեան եւ իրենց անձին բիւրեղային մաքրութեան մէջ է: Մխիթար այն է իր դործին մէջ, ինչպէս յայտնուած է առաջին պահէն իր մեծ յղացումին: Մտքի ծնունդ մըն է իր դործը, առանց խորհրդաւոր ծալքերու: Ան տեսաւ անկեալ միժմակը իր ազգին, իր ժողովուրդին, եւ իր օրերու եկեղեցական կեանքին: Եւ ծրա-դրեց վերականգնումը այդ բոլորին:

Եթէ պատմութեան ճշմարիտ տուեալներով, եւ սրտի ու մտքի անկեղծ մերձեցումով իջնենք ասպարէզ, Մխիթարի անձին մէջ պիտի չգտնենք երբեք նշոյլ մ'իսկ տառամտութեան, եւ ոչ ալ յեղաշրջումի նմոյշ մը իր գաղափարախօսական նուաճումներուն մէջ: Մխիթար աստուածաբան եւ իմաստասէր միտք՝ չունի երբեք իր տեսութիւններուն մէջ այն կէս մը անհասկնալի կեցուածքը, որ խորհուրդի գաղափարով ներկայացուած է յարգելի յօդուածագրէն:

Եթէ աստուածաբանական ուղիղ հետեւութիւնները եւ ազգային եկեղեցական պատմութիւնը յստակապէս աչքերով եւ միամիտ հաւատքով քննուին

եւ առնուին որպէս մեկնակէտ, Մխիթար կը դադարի իսկոյն ըլլալէ խորհուրդ, եւ կը պատկերանայ որպէս անաղօտ լուսարձակ մը, որուն հօրը եւ ջերմին ճառագայթները կ'երթան ծաւալիլ ազգին բոլոր խաւերուն մէջ եւ դառնալ աղբիւր կենսունակութեան: Տեղն ու ժամանակը չէ աւելի մանրամասնելու եւ ճշտագոյն եզրաբանութեամբ մը անդրադառնալու այս հարցին շուրջ:

Մխիթար մեզի եւ բովանդակ ազգին համար այն անմերձեանալի բարձունքն է, որուն կը նայինք զմայլած: Մխիթար երկրորդ լուսաւորիչը ազգին, լուսանորդը հին երջանիկ դարերու, երբ մեր ժողովուրդին ճակատադէրը անայլայլ եւ վստահ քայլերով կը ձկտէր իր նպատակին տիեզերական համեղ-բայրութեան մէջ: Մխիթար, զօդ միութեան եւ համերաշխութեան, է պարզապէս մեր ժամանակին համար լոյսի առաքեալը եւ մտքերու առաջնորդը: Ահաւասիկ ինչ որ կարելի է խորհիլ եւ ըսել Սերաստիոյ մեծ Զաւակին մասին՝ իբրեւ բացարձակ ճշմարտութիւն եւ անհերքելի իրականութիւն:

Ինքը անցած այլեւս անմահներու աշխարհը, թողած է ետին իրմէ հիմնուած իր մեծ գործը: Ս. Ղազար, հայրենի աշխարհին մէկ պատկերն է, ուր ծնունդ առաւ եւ բեղնաւորեցաւ անոր հանճարեղ յղացքը: Ս. Ղազար օրորան հայ մշակոյթին, հայ կեանքին, աւելի քան երկուքուկէս դար իր կրթական եւ հրատարակչական աննախընթաց եւ անխոնջ գործունէութեամբ զբաւած է ուղղորդութիւնը հայ համայնքին: Համայնքը, սակայն, կը բաղկանայ անհատներէ: Ընտիր եւ զարգացած անհատը զբաւականն է ազգին բարձրութեան եւ համայնքային գոյութեան: Օտար երկինքներու տակ կեանք առած հայ մանկութիւնը, ներկայ շրջանիս մանաւանդ կը կարօտի աջակցութեան եւ բուռն աշխատանքի: Գիտակից հայրենասիրութեամբ օժտուած անհատները, որոնցմէ յետոյ պիտի կազմուին ազգային միութիւնները, մեր գաղութային պայքարին առաջին զօրն վրայ կը գտնուին: Վեր բռնել անհատը դպրոցով, մամուլով, կրօնական սկզբունքներով, պէտք է ըլլայ միակ նպատակակէտը բոլոր կազմակերպութիւններուն եւ բոլոր կեդրոններուն: Եկեղեցի, դպրոց, մամուլ, առանց շփոթելու ազգի ու կրօնի գաղափարները, տակաւին երկարատեւ պիտի պահեն գաղութներու մէջ տուայտող հայութեան մը բեկորները:

Այս մտահոգութեամբ վաստակող դաստիարակները եւ առաջնորդները մեր ժամանակներուն, կրնան վստահ ըլլալ թէ լուծած պիտի ըլլան Մխիթար - խորհուրդը, կամ առեղծուածը ազգային գոյութեան՝ համերաշխութեան եւ սիրոյ աստուածային գաղափարներուն մէջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



1598-71

ԴՐԱԽՏԱԳԻՐՔ

ԱՌԱՔԵԼ ՍԻՆԵՑԻՒ

ԱՌ. ՍԻՆԵՑԻՒ ԵՐԿԵՐԸ

Շուրջ կէս դար առաջ՝ Ս. Ղազարու տպարանէն լոյս տեսաւ Առաքել Սինեցիի Աղամգիրքը, աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեանի(1). ու յաջորդաբար, նոր հատորով մը հրապարակելու ժ. Ղարու Տաթեւեան սոխակին միւս քերթունքներու հաւաքածոն, խմբագրութեամբ միւսնոյն բանասէր Հօր(2), որ կը ներկայացնէ բնագրի քննական հրատարակութիւն մը՝ բաղմամբիւ ձեռագիրներու բաղդատութեամբ, տալով նաեւ կենսագրական կարեւոր տեղեկութիւններ եւ այլ դիտողութիւններ, յատկապէս դանդաղեցող համայնուն Առաքել Բաղդեցիի երկերէն:

Մեր միջնադարեան դրականութեան գոհարները ևւրոպացիներուն ծանօթացընելու տենչով առլցուն, Արշակ Զօպանեան իսկոյն Փրանսիէի կը թարգմանէր Առաքել Սինեցիի քերթունքներէն եւ Աղամգիրքէն հատընտիր էջեր, ու կը կազմէր La Roseaie d'Arménie-ի առաջին հատորը, որու ընդարձակ յառաջաբանին մէջ կը վերլուծէր դրական ու գեղարուեստական արժէքը Առաքել Սինեցիի բանաստեղծութեան(3):

Հ. Ներսէս Վրդ. Ակինեան, Զօպանեանի հրատարակութեան առիթով կատարած դրականականի մը մէջ՝ կը խոստանար կենսագրական քանի մը նոր գիծեր մատնանել Առաքել Սինեցիի մասին, ինչպէս նաեւ խօսիլ անոր հարազատ եւ անհարազատ տաղերու թիւին վրայ՝ ընդարձակ ուսումնասիրութեան մը մէջ(4). դժբախտաբար ցարդ լոյս չէ տեսած այդ ուսումնասիրութիւնը:

Վերջերս, Արշակ Զօպանեան, Գեղումիի մէջ հրատարակած յօդուածի մը մէջ, ուր երեւան կը հանէր միջնադարեան հայ գրականութեան ի նպաստ թափուած ճիշդը՝ վերջին յիսնամեակի շրջանին, փափաք կը յայտնէր որ փութով ի լոյս ընծայուէր Առաքել Սինեցիի վերագրուած մէկ ուրիշ կարեւոր գործը, Դրախտագիրքը(5):

ԴՐԱԽՏԱԳԻՐՔ

Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեան, իր հրատարակած երկրորդ գրքի նախաբանին մէջ, Առաքել Սինեցիի գործերու շարքին կը դասէ Դրախտագիրք մը, զոր կը համարի թէ նոյն ըլլայ Ստեփանոս Ռոշեանի յիշատակած Աղամգիրքի չորրորդ հատորին հետ(6):

(1) «Թանգարան հիմ եւ նոր դպրութեանց. Դ.» ԱՌԱՔԵԼ ՍԻՆԵՑԻՒ. Աղամգիրք. Վեհտիկ, Ս. Ղազար, 1907, էջ 333: Գրախօսական մը, Ե. Պ. Ֆ. ստորագրութեամբ, տե՛ս Հանդէս Ամսօրեայի մէջ, ԻԲ. (1908), Բ. 3, էջ 92:

(2) «Թանգարան հիմ եւ նոր դպրութեանց. Զ.» Առաքել Սինեցիի եւ իր քերթունքները. Վեհտիկ, Ս. Ղազար, 1914, էջ 356: Առաքել Սինեցիի մասին տե՛ս նաեւ Հանդէս Ամսօրեայի Ժ. (1900), Բ. 5-6, էջ 154: Ամսօրեայի Ժ. (1908), Բ. 3, էջ 96: Դարձեալ անդ, ԻԲ. (1908), Բ. 3, էջ 96: Եւ Բ. 4-5, էջ 156: Բզմվյ. 1924, էջ 14-16:

(3) La Roseaie d'Arménie. Tome Premier: Arakel de Sunik; pages choisies. Paris, éd. Ernest Leroux, 1918, pg. VIII + 120, 4°.

(4) Հանդէս Ամսօրեայ, ԼԴ, (1920), էջ 51-54:

(5) Գեղումի, 1947. (նուիրուած «Բազմալեզու» Ս. դարադարձին). «Միջնադարեան Հայ գրականութիւնը». էջ 19-24, յատկապէս էջ 20 եւ 23:

(6) Առաքել Սինեցիի եւ իր քերթ. (տե՛ս Ծանօթ. 2), էջ 104: Աղամգիրքը բաղկացած է միայն երեք գրքերէ: Կամ հատորներէ: